«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

# Վերապատրաստվող ուսուցչի հետազոտական աշխատանք

Հետազոտության թեմա՝ **Համագործակցությունն ուսուցման առանձնահատկությունները հանրակրթական դպրոցում**


Հետազոտող ուսուցիչ՝ Տաթևիկ Հարությունյան

Վաղարշապատի Մաքսիմ Գորկու անվան թիվ 5 ավագ դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Անի Իսկանդարյան


Կիմավիր
2023

# Ներածություն

Մեր դարի բնութագրիչներից մեկն է համագործակցությունը: Համագործակցային ուսուցման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական աջակցող փոխկախվածության ապահովումը:

Կրթության ոլորտի աշխատողները ամենուրեք գիտակցում են, որ դասավանդման և ուսուցման հնացված ձևերը այլևս անկարող են ստեղծել ու զարգացնել գիտելիքներ ու հմտություններ, որոնք անհրաժեշտ են քաղաքացուն գիտելիքների տնտեսության մեջ բարեկեցիկ կյանքով ապրելու համար: Հետևաբար ինչպես Հայաստանում, այնպես էլ ամենուրեք, դպրոցում անհրաժեշտ են դասավանդման և ուսուցման այլընտրանքային նոր մոտեցումներ:

***Համագործակցային ուսուցման տարրերը***



Համագործակցային ուսուցման տարրերը ըստ Ջոնսոնների հինգն են՝

1. Դրական փոխկախվածություն. Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու, աջակցելու մթնոլորտ: Սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն: Այն նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը: Քննարկումներն ու ձգտումներն օգնում են խմբի անդամների փոխհարաբերություններին:

2. Դեմ առ դեմ, խթանող փոխազդեցություն. Խմբի անդամները համգործակցում են, փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են տեղեկությունը, ապահովում են հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար:

3. Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն. Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար, խմբի մաս է, գաղափարներով և մտքերով կիսվում է մյուս անդամների հետ, պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքը:

4. Սոցիալական հմտություններ. Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը, խոսողին հետևելը, առաջադրանքը կատարելիս ներդրում ունենալը:

5. Խմբային գործընթաց. Խմբի անդամների հաջողությունների, փոխհարաբերությունների, համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլ է: Դրանք զարգացնում են սոցիալական հմտությունները, ապահովում են խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը:

Խիստ կարևոր է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը: Ուսուցիչներից շատերն են դասավանդման ընթացքում կիրառում խմբային աշխատանքը, սակայն քչերն ունեն ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդները

ինտեգրելու համար անհրաժեշտ վարպետություն: Հենց այդ պատճառով համագործակցային ուսուցումը քիչ է կիրառվում դասարանում և դպրոցում կիրառվող փոքր խմբերով աշխատանքները ավելի շատ խմբային աշխատանքներ են քան համագործակցային ուսուցում: Համագործակցային ուսուցման կիրառումը սովորելը ժամանակատար գործընթաց է: Մեկ աշխատանքային հանդիպումը կամ սեմինարը դեռևս բավարար չէ: Ուսուցիչներից պահանջվում է մեկ կամ երկամյա մասնագիտական վերապատրաստում և ուսուցում: Այդ ժամանակահատվածում չափազանց կարևոր է դասարանում պարբերաբար կիրառել ուսուցման հնտությունները, ուսումնասիրել համագործակցային ուսուցման վերաբերյալ գրականություն, ինչպես նաև համագործակցել նմանատիպ գործընթացներում ներգրավված ուսուցիչների հետ:

Հայաստանի դպրոցներն, ի տաբերություն այլ երկրների դպրոցների, ավելի շատ հիշեցնում են ուսուցիչների և սովորողների ավանդական համայնքներ: Ուստի համագործակցային ուսուցումը Հայաստանում ունի ներդրման ու զարգացման համար անհրաժեշտ հիմք և բարենպաստ պայմաններ:

# Գրականության ակնարկ

<<Ոչ մի հետաքրքիր նորույթ ի հայտ չի գալիս առանց համագործակցության>>:
Ջեյմս Ուաթսոն

Համագործակցային ուսուցման կիրառման պատմությունը գալիս է դեռևս անտիկ ժամանակներից: Հին հույն Սենեկան պնդում էր, որ սովորեցնողը սովորում է կրկնակի: Վերջին տարիներին համագործակցային ուսուցմանը շատ են անդրադառնում:

«Ոչ ոք ոչ ոքի չի կրթում, ոչ էլ մենք ենք մեզ դաստիարակում. մենք միմյանց կրթում ենք հաղորդակցության մեջ՝ այս աշխարհում ապրելու համատեքստում»:
Պաուլո Ֆրեյրի

Պաուլո Ֆրեյրը համոզված էր, որ սովորելը չի փոխանցվում մի մարդուց մյուսին: Փոխարենը դա կառուցելու գործընթաց է մարդկանց միջև: Հետևաբար, ուսման գործընթացում ամենակարևորը ուսանողների մասնակցությունն է: Նա հավատում էր, որ աշխարհը կարիք չունի գաղափարներ կրկնող մարդկանց. աշխարհը կարիք ունի ստեղծողների, որոնք ստեղծում են նոր հնարավորություններ:

Նրա տեսանկյունից կրթության ամենակարևոր մասերն են ստեղծագործական խրախուսումը և դեպի անհատական ու կոլեկտիվ ազատություն տանող ճանապարհի մաքրումը:

Ես նույնպես համակարծիք եմ Պաուլո Ֆրեյրի հետ և կարծում եմ, որ համագործակցային մեթոդով աշխատելիս սովորողները ստանում են այդ ազատությունը :

# Հետազոտության ընթացք

Համագործակցային ուսուցման հիմքում ընկած են հիմնականում երեք տեսություններ՝ սոցիալական փոխկախվածություն, ճանաչողության զարգացում, վարքագծային ուսումնառություն:

***Սոցիալական փոխկախվածության*** տեսության ներկայացուցիչները դիտում են խումբը որպես դինամիկ ամբողջություն, որտեղ շեշտադրվում է ընդհանուր նպատակից բխող փոխկախվածությունը. Խմբի անդամներից մեկի վիճակի փոփոխությունը հանգեցնում է մյուսների վիճակների փոփոխության: Իսկ ներխմբային լարումը հանգեցնում է խմբի ընդհանուր նպատակի իրականացմանը:

***Ճանաչողական զարգացման*** տեսությունն իր հիմքում ներառում՝ Պիաժեի և Բրունների հայացքները: Վիգոտսկին ասում էր՝ գիտելիքին հատուկ է սոցիալական որոշակի բնութագիր, ծնվում է ծագած խնդիրների ըմբռնման և լուծման ընթացքում գործադրած համատեղ ջանքերով: Նյութը վերապատմելու կամ վերաշարադրելու ընթացքում սովորողներն արդեն ձևավորված ճանաչողական կառուցվածքներում որոշակի փոփոխություններ են կատարում: Հետևաբար, ըստ Վիգոտսկու, մտավոր աշխատանքի լավագույն ձևը սովորածը ընկերոջը բացատրելն է: Իսկ Բրունները մշակեց հետազոտական ուսուցման գաղափարը, որը շրջադարձային եղավ: Նա ներկայացնում է ճանաչողական ուսուցման մի մոդել, որտեղ տեղեկությունն անցնում է ընկալում-դասակարգում յուրացում շղթայով և վերաճում գիտելիքի՝ հիմնվելով ոչ թե *ինչ* սովորելու, այլ *ինչպես* սովորելու սկզբունքի վրա:

***Վարքագծային ուսումնառության*** տեսության կողմնակիցները շեշտադրում են խմբային աշխատանքի խրախուսումը, որը որոշակի դրդապատճառ կամ շարժառիթ է դառնում ուսուցման գործընթացի համար: Սքիները մշակեց ծրագրավորված ուսուցման մի ձև, ըստ որի՝ ուսումնական նյութը բաժանվում է տրամաբանական հաջորդականություն ներկայացնող փոքրիկ մասերի՝ քայլերի: պատասխանելով համեմատաբար պարզ և հեշտ մի քանի հարցերի՝ աշակերտները խրախուսանք են

ստանում, ինչը դառնում է ուսուցման գործընթացը շարունակելու և նյութն ամբողջությամբ յուրացնելու խթան:

Խմբում սոցիալական փոխկապվածության գաղափարը ամբողջացրին ամերիկացի Ջոնսոն եղբայրները: Նրանք զարգացրին <<Սոցիալական փոխկապվածության>> տեսությունը՝ նշելով սոցիալական փոխկապվածության ազդեցությունը սովորողների նվաճումների, փոխհարաբերությունների, հոգեբանական առողջացման և սոցիալական զարգացման  վրա:

Ներկայումս համագործակցային ուսուցումը լայն տարածում ունի սկանդինավյան երկրներում և ԱՄՆ-ում:

Համագործակցային ուսուցման կարևորագույն ձեռքբերումներն են

- Անձի զարգացումը և անհատականության ձևավորումը
- Հոգեբանական և ֆիզիկական ապահովումը
- Սթրեսի հաղթահարումը
- Շրջապատողների հետ փոխհարաբերությունների կառուցումը

Համագործակցային ուսուցումը ակնկալում է ուսուցչի դերի փոփոխություն, ուսուցիչն առաջնորդում և ուղղորդում է դասարանը՝ ստեղծելով փոխադարձ վստահության մթնոլորտ և համագործակցությունը խթանող միջավայր:

Համագործակցությունն ուսուցման գործընթացը դարձնում է առավել գրավիչ և հետաքրքիր՝ բոլոր սովորողների համար ապահովելով մասնակցության հավասար հնարավորություններ: Այն թույլ է տալիս ուսուցչին՝ լուծելու ավանդական մեթոդներով բոլոր սովորողների ակտիվ մասնակցության ապահովման հարցը: Դասարանը դառնում է ընդհանուր նպատակներ ունեցող փոքր խմբերի թիմ, ուր հեշտությամբ կարելի է լուծել ամենաբարդ մանկավարժահոգեբանական խնդիրները՝ անկախ առարկայից և թեմայից: Մասնավորապես սովորողներն իրենց ավելի ազատ և անկաշկանդ են զգում փոքր համագործակցային խմբերում, որտեղ ստանում են ինքնադրսևորման լայն հնարավորություններ:

Սովորողները համատեղ ջանքերով առավել հեշտությամբ են ընկալում նոր նյութը՝ հայտնագործելով գիտելիքը և կիրառելով այն: Համագործակցային ուսուցումը ուսուցչին

առաջադրում է որակապես նոր և ավելի բարձր խնդիրներ՝ կապված ուսուցման նպատակների հետ:Գիտելիքի մատուցմանն ու վերարտադրման ստուգմանը փոխարինելու են գալիս ուսուցման գործընթացի կառավարման և սովորողների համագործակցային հմտությունների ուսուցման նոր մոտեցումները: Խիստ արդիական են դառնում ինչ և ինչպես սովորեցնել:

Համագործակցային ուսուցումն արդյունավետ է բոլոր տարիքի սովորողների, այդ թվում՝ մեծահասակների՝ ուսուցիչների և դասախոսների համար: Ուսուցիչները, ինչպես իրենց աշակերտները, սովորում են տարբեր եղանակներով: Տեղեկատվություն հաղորդելու դասախոսական և դաս պատասխանելու կամ այսպես կոչված <<դաս հարցնելու>> ավանդական մեթոդները չեն համապատասխանում սովորել սովորեցնելու մոտեցմանը: Հին ասացվածքն ասում է. <<Ուսուցման նոր մեթոդներ սովորելու լավագույն ճանապարհը հենց մեթոդի միջոցով սովորելն է>>:

**Համագործակցային տեխնոլոգիայում կիրառվող մեթոդները և հնարները**

- Աշակերտների թիմային առաջադիմություն
- Խճանկար
- Շրջագայություն պատկերասրահում
- Երեք բանալի և մեկ կողպեք
- Հինգրոպեանոց ազատ շարադրանք

***Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ:*** Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակվել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ

ցուցանիշները։ Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտների, և՛ խմբերին։

***Խճանկար (Ջիգսա, Jigsaw):*** Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է։ Այն մշակվել և փորձարկվել է Տեխասի A&M համալսարանում՝ Էլիոթ Արոնսոնի և նրա գործընկերների կողմից, այնուհետև լրամշակվել է Սլավինի և վերջինիս գործընկերների կողմից։ Խճանկարի փուլերն են.

- ✓ նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում,
- ✓ աշխատանք փորձագիտական խմբում,
- ✓ աշխատանք ուսումնական խմբում,
- ✓ ավարտական աշխատանք,
- ✓ ամփոփում։

***Շրջագայություն պատկերասրահում:*** Սա «Խճանկար» մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ։

***Երեք բանալի և մեկ կողպեք:*** Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով։ Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան։ Այս մեթոդով աշխատելիս աշակերտների մեջ ձևավորվում է ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն, ինչպես նաև համագործակցելու, իր ընտրությունը հիմնավորելու կարողություն։

***Հինգրոպեանոց ազատ շարադրանք:*** Հինգրոպեանոց ազատ շարադրանքի մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից։ Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանք։

Համագործակցային ուսուցման առավելությունները հիմնվում են լուրջ ուսումնասիրությունների և հետազոտությունների վրա: Ըստ Ջոնսոնների՝ 1898-1989 թթ. Ընթացքում անցկացվել է ավելի քան 550 համեմատական հետազոտություն՝ համագործակցային, անհատական և մցակցային ուսուցման արդյունավետությունը պարզելու նպատակով: Այդ հետազոտությունները ցույց են տվել, որ համագործակցային ուսուցումը կիրառելի է բոլոր դասարաններում, բոլոր ուսումնական դասընթացներում, բոլոր տնտեսական, տարիքային, ազգային միջավայրերում: Հետազոտությունների հիման վրա Ջոնսոնները և Հոլուբեկը առանձնացնում են երեք արդյունքներ.

ա) բարձր առաջադիմություն և արդյունավետություն

բ) ավելի աջակցող և նվիրված հարաբերություններ

գ) հոգեբանական առողջության, բանիմացության ու ինքնարժևորման ավելի բարձր աստիճան

Ժամանակակից մանկավարժության գերխնդիրը ոչ թե երեխային սովորել սովորեցնելն է, այլ երեխայի մեջ սովորելու ցանկություն և նոր գիտելիքներ ձեռք բերելու անընդհատ ձգտման ձևավորումը՝ դրանով պայմանավորելով ուսումնական գործընթացի հաջողությունը, ուսուցչի և աշակերտների փոխհարաբերությունները, ինչպես նաև աշակերտ- կոլեկտիվ համագործակցությունը: Methodos հունարենից թարգմանաբար նշանակում է <<ուղի, միջոց>>: Ուսուցման մեթոդ ասելով՝ մենք հասկանում ենք անընդհատ կիրառվող աշխատանքի ձև, որը կիրառում է ուսուցիչը՝ ուսումնական գործընթացում, որը հնարավորություն է տալիս զարգացնել աշակերտների իմացական կարողությունները, հետաքրքրությունները, ձեռք բերել նոր կարողություններ և հմտություններ, ինչպես նաև այդ ամենը կիրառել գործնականում: Ուսումնական գործընթացում կիրառվում են բազմաթիվ մեթոդներ: Մենք մասնավորապես անդրադառնալու ենք այն մեթոդներին, որոնցում առկա է սովորողների դերը, որոնք աշակերտներին դարձնում են

գիտելիքների  և կարողությունների ձեռքբերման գործընթացի մասնակիցը: Այդ մեթոդների թվին է պատկանում համագործակցային ուսուցումը: Այն սովորելու անհատական ոճերի, սովորողի ինքնուրույնության  և շարժառիթների իրականացման լավագույն ձևն է: Միասին աշխատելով աշակերտները  կարող են համատեղ նպատակների հասնել:

Համագործակցային ուսուցման կիրառումը սկսվում է դեռևս անտիկ դարաշրջանից: «Թալմուդը հասկանալու համար պետք է ընկեր ունենալ»,- գրված է Թալմուդում: Հռոմեացի փիլիսոփա Սենեկան ասում էր, որ սովորեցնողը կրկնակի է սովորում:

Խմբային աշխատանքի ամենամեծ առավելությունը բոլորի հավասարաչափ ներգրավվածությունն է դասին, և այն, որ բոլորը իրենց վրա կրում են սովորողի և սովորեցնողի պատասխանատվությունը: Խմբային աշխատանք կատարելու ժամանակ պարզ երևում է խմբի անդամների միասնական նպատակային գործողությունները: Քանի որ խմբի անդամներն ունեն տարբեր ընդունակություններ, անմիջապես ընտրում են իրենց« առաջնորդին՝ համախմբելով նրա շուրջը, կատարում են նրա տված աշխատանքը: Խմբային աշխատանքի ժամանակ հստակ երևում է աշակերտների համագործակցությունը, գործողության մեջ են դրվում տեսական գիտելիքները:

# Ամփոփում

Ուսումնասիրելով օտար լեզուների ուսուցման այլընտրանքային մեթոդները՝ եկա այն եզրահանգման, որ սովորողները համատեղ աշխատանքում առավել հեշտությամբ են ընկալում նոր նյութը, ըմբռնում գիտելիքը և կիրառում այն: Համագործակցային ուսուցումն արդյունավետ է բոլոր տարիքի սովորողների, այդ թվում՝ մեծահասակների՝ ուսուցիչների համար: Ուսուցիչները, ինչպես իրենց աշակերտները, սովորում են տարբեր եղանակներով: Համագործակցային ուսուցման առավելությունները հիմնվում են լուրջ ուսումնասիրությունների և հետազոտությունների վրա: Անցկացվել են բազմաթիվ համեմատական հետազոտություններ՝ համագործակցային , անհատական և մրցակցային ուսուցման արդյունավետությունը պարզելու նպատակով: Այդ հետազոտությունները ցույց են տվել, որ համագործակցային ուսուցումը կիրառելի է բոլոր դասարաններում, բոլոր ուսումնական դասընթացներում: Դասարանում համագործակցային խմբերով աշխատանքը բազմաթիվ առավելություններ ունի: Այն գործուն և արդյունավետ ուսումնառության հնարավորություն է ընձեռում:

Այս հետազոտական աշխատանքը կատարելիս ես եկա այն համոզման, որ սովորողները, համագործակցելով միմյանց հետ, զարգացնում են և՛ իրենց ուսումնական հմտությունները, և՛ հետաքրքրություններն ու երևակայությունը: Խմբային աշխատանքի ընթացքում սովորողների մոտ ձևավորվեցին միմյանց հարգելու, իրար լսելու, իրար հետ համագործակցելու կարողություններ: Համագործակցային ուսումնառության ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանը ակտիվորեն ներգրավվեց ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվեց ու յուրացվեց հենց աշակերտների միջոցով: Օտար լեզվի ուսուցման այլընտրանքային մեթոդների կիրառումը ուսումնական գործընթացի ընթացքում զարգացրեց աշակերտների հմտությունները, խթանեց նրանց երևակայությունը և մղեց նրանց գործնական աշխատանքների:

Այսպիսով՝ ուսուցման այլընտրանքային մեթոդները կիրառելի են օտար լեզվի դասերին և նպաստում են այս առարկայի ուսուցման արդյունավետությանը, բարձրացնում սովորողների ակտիվությունը:

Աշակերտները զարգացնում են իրենց ուսումնական հմտությունները և ընդլայնում ըմբռնումները՝ զանազան իրական հանգամանքներում մասնակից դառնալով իրենց հետաքրքրություններն ու երևակայությունը խթանող կոնկրետ գործնական աշխատանքների: Նրանք անհատապես և խմբերով կարծիքներ են քննարկում, նախապատրաստվում ելույթների և այլն:

## Գրականության ցանկ

1.ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

<<Տիգրան Մեծ>>, Երևան 2005

Հեղինակներ- Անահիտ Արնաուդյան

Իզաբելլա Օհանովա

Գայանե Հովհաննիսյան

Անահիտ Զոհրաբյան

Քրիստինե Գրիգորյան

Մելանյա Դավթյան

2. <<Կրթության արդի հիմնախնդիրներ. դեպքերի ուսումնասիրություններ. հեռանկարներ>>

՝<<Լուսաբաց հրատարակչություն>>, Երևան 2005

3. Բաբանսկի Յու., Մանկավարժություն